ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ. հասցե՝ ofelya.hovhannisyan82@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i51.317

ԱՄՓՈՓՈՒՄ

Մխիթար Գոշի բարոյախոսական ժառանգության քննությունը ավագ դպրոցի կրթական հարացույցում դիտարկվում է որպես արդիականության մարտահրավերներին դիմակայելու հիմնարար միջոց: Ժամանակակից պատանու բարոյական ապակողմնորոշման պայմաններում Գոշի բարոյախոսական համակարգը, խարսխված լինելով արդարության, չափավորության և բանականության սկզբունքների վրա, առաջարկում է հասարակական արատների դեմ ներքին դիմադրողականություն ձևավորելու համար կարևոր և ինքնատիպ զինանոց: Գոշի աշխարհայացքում բարոյականությունը հանդես է գալիս իրավագիտության և պետականաշինության գաղափարի հետ օրգանական միասնության մեջ: Իրավական պետության կայացման համատեքստում նրա պատգամած «համընդհանուր բարիքի» և սոցիալական պատասխանատվության սկզբունքները վերածվում են կրթական ուղենիշների՝ սերմանելով այն գիտակցությունը, որ անհատական առաքինությունը հասարակական-պետական հզորության հիմնասյունն է: Առակների այլաբանական կառուցվածքն ու բարոյական երկընտրանքների լուծումը հզոր մեթոդական գործիքներ են պատանիների վերլուծական կարողությունների զարգացման համար: Դրանք նպաստում են երևույթների ենթատեքստային ընկալմանը և պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով գիտակցված բարոյական ընտրության կայացմանը: Միջնադարյան իմաստնության վերհանումը թույլ է տալիս սովորողին ընկալել ազգային մշակույթը որպես համամարդկային քաղաքակրթության անքակտելի մաս՝ խթանելով ազգային ինքնաճանաչումն ու արժանապատվության ամրապնդումը:

Այսպիսով, Մխիթար Գոշի բարոյախոսական համակարգի ներդրումը կրթական գործընթացում ոչ միայն պատմագիտական ճանաչողության խնդիր է, այլև գիտամանկավարժական ռազմավարություն, որի նպատակն է ձևավորել բանական, բարոյապես հասուն և քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող ժամանակակից անհատին:

Բանալի բառեր՝ *այլաբանական կառուցվածք, բարոյաիրավական արժեհամակարգ, քաղաքացիական պատասխանատվություն, քննադատական մտածողություն, արժեքային կողմնորոշում, պետականակենտրոն դաստիարակություն, ազգային ինքնություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Գոշի աշխարհայացքային հարացույցում բարոյականությունը դիտարկվում է որպես բացարձակ արժեք (Անթաբյան, 1980): Նա հայ իրականության մեջ հիմնավորեց իրավունքի և բարոյականության օրգանական փոխլրացվածության գաղափարը՝ պնդելով, որ իրավունքն առանց բարոյական հիմքի կույր է, իսկ բարոյականությունն առանց իրավական լծակների՝ անզոր:

Գոշի գրական-փիլիսոփայական ժառանգությունը բնութագրվում է որպես «կանոնական բարոյախոսություն»: Հեղինակը էթիկական նորմերը տեղափոխում է իրավական-գործնական հարթություն. եթե ավանդական քարոզախոսությունը սահմանափակվում էր գթասրտության հորդորներով, ապա Գոշը ձգտում է սահմանել այդ գթասրտության «իրավական չափը» և դրա դրսևորման մեխանիզմները հասարակական փոխհարաբերություններում: Նրա հայեցակարգում բարոյականությունը հասարակական համակեցությունն ապահովող հիմնական «շաղախն» է (Արևշատյան, 1975): Ըստ հեղինակի՝ առանց անհատի ներքին բարոյական զսպանակների, սոսկ արտաքին օրենքը ի զորու չէ երաշխավորել հասարակական կայուն կարգը (Օհանյան, 2012): Եթե նախորդող շրջանում ստախոսությունը դիտարկվում էր զուտ որպես աստվածային պատվիրանի խախտում (մեղք), ապա Գոշի վերլուծական համակարգում այն որակվում է որպես սոցիալական հանցանք, քանի որ խաթարում է միջանձնային վստահությունը՝ կազմալուծելով համակեցության հնարավորությունը (Մկրտչյան, 2005): «Դատաստանագրքի» և առակների գաղափարական միասնությունն ու փոխկապակցվածությունը Գոշի մեթոդաբանական հանճարի լավագույն վկայությունն են:

«Դատաստանագիրքն» ուրվագծում է իրավական այն սահմանագիծը, որի խախտման պարագայում պետական կամ եկեղեցական ատյանները կիրառում են պատժամիջոցներ: Առակների գերագույն նպատակը բարոյական այնպիսի գիտակցության արմատավորումն է, որը կբացառի անհատի առնչությունը «Դատաստանագրքի» պատժիչ գործառույթներին: Այլ կերպ ասած՝ բարոյական դաստիարակությունը պետք է դառնա այն հաստատուն հիմքը, որը կկանխարգելի իրավախախտումը դեռևս մտադրության կամ գաղափարի մակարդակում (Գևորգյան, 2010): Գոշի ստեղծագործական հանճարի գագաթնակետը դրսևորվում է կենդանական,

բուսական և նույնիսկ անշունչ առարկաների (օրինակ՝ երկնային մարմինների) աշխարհի այլաբանական պատկերման մեջ, որի միջոցով նա վերհանում է մարդկային հոգեբանության նրբագույն և հակասական շերտերը: Գոշի կերտած կերպարները զուրկ են միագիծ բնութագրումներից. նրանք մարմնավորում են որոշակի սոցիալական դերեր և հոգեբանական տիպեր՝ տիրակալից մինչև հնազանդվող, խորամանկից մինչև անձնազոհ (Մկրտչյան, 2005): Հեղինակի փիլիսոփայության մեջ բարոյականությունը մարդկային հասարակության մեջ տիեզերական բնականոն կարգի արտացոլումն է (Արևշատյան, 1975): Այս համատեքստում այլաբանությունը Գոշի ձեռքում վերածվում է յուրօրինակ «էթիկական դիվանագիտության»՝ հանդես գալով որպես բարոյական խրատի մատուցման մեղմացնող և ներազդող գործիք, որն իրականացնում է մի քանի առանցքային գործառույթներ (Գոշ, 1980):

Միջնադարյան հասարակարգում իշխանավորների կամայականությունների կամ դատական համակարգի անարդարությունների բացահայտ քննադատությունը հղի էր վտանգավոր հետևանքներով: Այս համատեքստում այլաբանությունը հանդես էր գալիս որպես գեղագիտական «հեռավորություն» պահպանելու արդյունավետ հնարավորություն: Քողարկվելով «առյուծի» կամ «գայլի» այլաբանական կերպարների ներքո՝ Գոշը փաստացի իրականացնում էր իր ժամանակաշրջանի տիրակալների և սոցիալական արատների խորքային վերլուծություն ու քննադատություն: Այլաբանական վերլուծության մեթոդը բացառիկ արդյունավետություն է դրսևորում ավագ դպրոցի կրթական գործընթացում, քանի որ այն նպաստում է սովորողների ընկալումների տեղափոխմանը կոնկրետ պատկերից դեպի վերացարկված գաղափարական ընդհանրացումներ, հնարավորություն է ընձեռում կազմակերպել բովանդակային բանավեճեր, որտեղ աշակերտները քննության են առնում ոչ թե անձնավորված կերպարներ, այլ նրանցով ներկայացված բարոյական և արժեքային հայեցակարգերը (Գևորգյան, 2010), ստեղծում է վերլուծական հարթակ հասարակական բացասական երևույթների (անարդարություն, կեղծավորություն) քննարկման համար՝ ապահովելով անհրաժեշտ ակադեմիական չեզոքություն և վերլուծական սթափություն (Օհանյան, 2012):

Մխիթար Գոշի հայեցակարգային մոտեցումը մարդու էությանն ու նրա էթիկական պարտավորություններին հայ միջնադարյան մտածողության մեջ ներմուծում է որակական նոր հարացույց (Արևշատյան, 1975): Հեղինակն ընդգծում է, որ մարդը նախևառաջ բանական էակ է, և հենց այդ բանականությունն է հանդիսանում նրա ազատ կամքի և ինքնորոշման աղբյուրը: Գոշի փիլիսոփայության մեջ բարոյականությունը դիտարկվում է որպես բանականության բարձրագույն դրսևորում. հետևաբար, ցանկացած անբարո արարք որակվում է որպես գործողություն սեփական

բանականության դեմ: Մարդը չի դիտարկվում որպես կանոնների ու պատվիրանների մեխանիկական կատարող. Գոշը առաջնային է համարում ներքին համոզմունքի գործոնը: Բարոյական ինքնավարության սկզբունքը ենթադրում է բարու գիտակցված ընտրություն՝ զերծ պատժի վախից կամ արտաքին հարկադրանքից (Օհանյան, 2012): Սա կարևորագույն հիմք է ավագ դպրոցականների շրջանում սեփական արարքների համար անհատական պատասխանատվության գիտակցումն արմատավորելու համար (Գևորգյան, 2010):

Գոշի մշակած բարոյական սկզբունքները զուրկ են վերացականությունից և ունեն ընդգծված գործնական-քաղաքացիական ուղղվածություն: Նրա արժեհամակարգը խարսխված է երեք հիմնարար առանցքների վրա՝ արդարամտություն, չափավորություն, խոհեմություն:

Այս երեք հիմնարար հատկանիշների համադրությամբ Մխիթար Գոշը կերտում է «բարոյական քաղաքացու» հայեցակարգային մոդելը, որն իր արդիականությունն է պահպանում ժամանակակից քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում: Հեղինակը հետևողականորեն զուգահեռներ է անցկացնում տիեզերական օրինաչափությունների և մարդկային վարքագծի միջև՝ հիմնավորելով այն թեզը, որ ինչպես բնական երևույթները (արեգակի շարժը, տարվա եղանակների հերթագայությունը) ենթարկվում են անխախտ կանոնների, այնպես էլ բարոյականությունը մարդկային կեցության բնական անհրաժեշտությունն է (Արևշատյան, 1975):

Ըստ Գոշի՝ չարիքը, անարդարությունը և ագահությունը խաթարում են տիեզերական ներդաշնակությունը. հետևաբար, անբարո անհատը օտարվում է կյանքի բնականոն հունից: Սա առանցքային դաստիարակչական դրույթ է ավագ դպրոցի համար, քանի որ բարոյականությունը ներկայացվում է ոչ թե որպես արտաքին արհեստական սահմանափակում, այլ որպես առողջ և բնականոն կենսակերպի անկյունաքար: Գոշի ընկալմամբ՝ մարդկային արատները զուտ անձնային բնութագրիչներ չեն, այլ հասարակության կառուցվածքային քայքայման հիմնական գործոններ: Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Գրականագետ Դ. Գասպարյանի նկատում է. «Մեծի վարքը օրինակելի է դառնում փոքրերի համար: Այս դաստիարակչական գաղափարը Գոշի առակների ուղենիշ սկզբունքներից մեկն է» (Գասպարյան, 2009):

Օրինակ՝ **«Ձկները և նրանց թագավորը»** առակում *ձկները մեղադրվեցին իրենց թագավորից. «Ինչո՞ւ եք ուտում ձեզնից մանր ձկներին: Հա մարձակություն ստանալով՝ ձկները պատասխանում են.*

«Որովհետև քեզնից սովորեցինք, շատերը եկան քեզ երկրպագելու, և կլանելով՝ քեզ կերակուր դարձրիր: Ըստ այդմ իրենք ևս ավելի հանդուգն եղան:

«Ջայլամն ու ծիտը» առակում հեղինակը հանդիմանում է ունայն ցանկությունները, որ փոքրերը, տեսնելով հզորների գործը, իրենք ևս ցանկանում են գործել՝ չմտածելով իրենց տկարության մասին: Ծիտը տեսնելով, որ ջայլամը մեծ–մեծ ձվեր է ածում, գայթակղվեց և ուսանելունպատակով հարցրեց գաղտնիքը: Ջայլամն ասաց. «Կրակ եմ ուտում և այդ պատճառով էլ խոշոր ձվեր եմ ածում»: Կարծելով, թե ճիշտ է ասածը, ծիտը կրակ կերավ ու մեռավ: Չմտածեց, որ ոչ թե դա է պատճառը, այլ հասակի մեծությունը: Քննադատելով ագահությունը՝ Գոշը թիրախավորում է շահագործման երևույթը, որը խարխլում է երկրի տնտեսական և իրավական հիմքերը: Նա փաստում է, որ նյութապաշտությունը մթագնում է բանականությունը՝ հանգեցնելով հանրային շահի նկատմամբ հանցավոր անտարբերության: Ամբարտավանությունը և իշխանատենչությունը դիտարկվում են որպես ներքին պառակտումների և երկպառակությունների աղբյուր, որոնք թուլացնում են պետականության դիմադրողականությունը արտաքին մարտահրավերների պայմաններում:

Գոշի խրատական ժառանգությունն ու առակներն ունեն ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ընդգրկում: Նա իր պատգամներն է ուղղում հասարակության բոլոր օղակներին՝ սկսած արքայից ու բարձրաստիճան իշխանավորներից, դատավորներից ու հոգևորականությունից, մինչև ռամիկներն ու շինականները (Գոշ, 1980): Սա փաստում է նրա մտածողության ժողովրդավարական և համապարփակ բնույթի մասին. բարոյական նորմը հանդես է գալիս որպես համապարտադիր գաղափար, անկախ անհատի սոցիալական դիրքից, դասային պատկանելությունից կամ ծագումնաբանությունից:

Պետականակենտրոն բարոյախոսությունը ավագ դպրոցի կրթական համատեքստում ձեռք է բերում առանցքային նշանակություն (Գևորգյան, 2010): Գոշը սովորեցնում է, որ անհատի բարոյական նկարագիրը պայմանավորված է հանրային բարօրության մեջ նրա ունեցած ներդրմամբ: Որևէ անհատ կամ սոցիալական խումբ դուրս չէ բարոյական պատասխանատվության տիրույթից: Այս մոտեցումը նպաստում է սովորողների քաղաքացիական ինքնագիտակցության բյուրեղացմանը՝ ամրագրելով այն հիմնարար թեզը, որ անձնական առաքինությունը հանդիսանում է հզոր և կայուն պետականության անխախտ նախապայմանը (Օհանյան, 2012): Գրականագետ Դ. Գասպարյանի հավելումով՝ «Առակների ոգին սոցիալական դասերի համերաշխությունն է. իշխաններն իրենց տեղում պետք է ճիշտ լինեն, ենթականերն իրենց: Եթե ամեն ինչ

իրար խառնվի, անկարգություն կլինի, և հանրությունը կկորցնի իր հավասարակշռությունը» (Գասպարյան, 2009):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հոդվածի հիմնական առաջադրույթներից՝ թեմայի քննաբանության համար ընտրել ենք հետևյալ մեթոդաբանական գործիքակազմը՝ հոգեբանական վերլուծության, տիպաբանական, մեկնաբանական, համադրական և նկարագրական մեթոդներ: Դրանք հնարավորություն են ընձեռում թափանցելու առակների հերոսների ներաշխարհի ծալքերը և բացահայտելու այն հոգեբանական զուգորդումները, որոնք ձևավորում են հեղինակի աշխարհընկալումը, վերհանելու առակներին բնորոշ կառուցվածքային ձևերը, խորքային շերտերն ու թաքնված իմաստները՝ դիտարկելով հեղինակի խոսքը որպես ինքնատիպ հոգևոր վավերագիր: Վերոնշյալ մեթոդները բավարար հնարավորություններ են ստեղծել իրականացնելու գրականագիտական ճշմարիտ վերլուծություններ՝ հենվելով հեղինակի ստեղծագործությունների վրա, բացահայտելով դրանց գեղագիտական հմայքն ու կենսական ճշմարտությունները: Այս մեթոդների համակարգային կիրառումը թույլ է տալիս Մխ. Գոշի արվեստը դիտարկել ոչ թե լոկ որպես գրական փաստ, այլ որպես մի ամբողջություն, որտեղ կյանքը և մարդկային ելևէջները միահյուսվում են ինքնատիպ գեղագիտության մեջ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մխիթար Գոշի առակների ժանրային առանձնահատկությունների քննությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու այն գեղագիտական մեխանիզմները, որոնց միջոցով հեղինակը ներազդում է ընթերցողի բարոյական գիտակցության վրա: Հեղինակը հմտորեն կամրջում է գեղարվեստական այլաբանությունը և սոցիալական իրականությունը: Այս մեթոդաբանությունը զարգացնում է երևույթների խորքը տեսնելու հմտությունը և օգնում է վերհանել պատճառահետևանքային կապերը՝ հիմնավորելով, որ յուրաքանչյուր այլաբանական կառույց ունի օբյեկտիվ սոցիալ-հոգեբանական հիմք: Այն բովանդակությունը, որը սովորողն ընկալում է որպես սյուժետային պատմություն և վերլուծում որպես տիպաբանական իրավիճակ, վերջնարդյունքում վերածվում է ներքին համոզմունքի և վարքագծային կանոնի (Գևորգյան, 2010): Սա բյուրեղացնում է պատանու բարոյական կողմնորոշիչները՝ նրան օժտելով կյանքի բարդ իրավիճակներում ճիշտ դիրքորոշվելու «բանալիներով»: Այլաբանությունը Գոշի ստեղծագործական մեթոդում վերաճում է ճանաչողական գործիքի, որի օգնությամբ հեղինակը քննության է առնում մարդկային հոգեկերտվածքի և հասարակական կեցության բազմաշերտ կողմերը: Գոշի առակների ժանրային հիմքում ընկած է ազգային աշխարհընկալումը, սակայն դրանց գաղափարական բովանդակությունը դուրս է գալիս

ազգային սահմաններից՝ ձեռք բերելով համամարդկային և տիեզերական հնչեղություն: Առակների ժանրային յուրահատկությունը պատանուց պահանջում է բազմաշերտ ընկալում (Մկրտչյան, 2005): Մխիթար Գոշի «կատարյալ մարդու» տիպարը ոչ թե վերացական է, այլ բարոյական և քաղաքացիական առաքինությունների ներդաշնակ համադրություն: Այս տիպաբանությունը հենվում է այնպիսի հիմնասյուների վրա, որոնք անմիջականորեն առնչվում են ժամանակակից պատանու անհատականության ձևավորմանը (Գևորգյան, 2010): Կատարյալ մարդը Գոշի ընկալմամբ բանական էակ է, ով իր առավելությունն իրացնում է գիտելիքի և քննական մտքի միջոցով: Հեղինակը գերակա արժեք է համարում ուսումն ու լուսավորությունը՝ փաստելով, որ տգիտությունը բոլոր սոցիալական չարիքների և բարոյական անկման ակունքն է: Իմաստնությունը նրա համար ոչ թե լոկ տեղեկատվական պաշար է, այլ երևույթների պատճառահետևանքային կապերը վերհանելու և իմաստավորելու ունակություն: Մխիթար Գոշի «կատարյալ մարդու» հարացույցը խարսխված է բանականություն – առաքինություն – արդարություն անքակտելի եռամիասնության վրա: Այս բաղադրիչների համակողմանի ներդաշնակությունը կրթական գործընթացում հնարավորություն է ընձեռում ավագ դպրոցում ձևավորել այնպիսի անհատականություն, որն օժտված է քննադատական մտածողությամբ, բարոյական ամուր հենքով և ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ (Օհանյան, 2012): Ավագ դպրոցական տարիքում պատանին թևակոխում է սոցիալականացման այնպիսի փուլ, երբ սկսում է իրեն ընկալել որպես հասարակության ներգործուն անդամ: Գոշի մարդակենտրոն տիպաբանությունը մատուցում է հստակ ուղենիշներ՝ անձնական ներուժը հանրային օգտակարության վերածելու համար: Հեղինակի համար արդարությունը ոչ միայն իրավական եզրույթ է, այլև բարոյական կեցվածք: «Կատարյալ մարդը» նա է, ով ոչ միայն սեփական վարքագծում է առաջնորդվում արդարության սկզբունքով, այլև ունակ է ցուցաբերելու ակտիվ անհամաձայնություն ցանկացած անարդարության նկատմամբ: Սա նպաստում է սովորողի մեջ քաղաքացիական համարձակության և բարոյական կայունության ձևավորմանը՝ զերծ պահելով նրան կրավորական դիտորդի դերից և օգնելով դիմակայել արտաքին բացասական ազդեցություններին: Գոշը փառաբանում է այն անհատին, ով իր մտավոր և բարոյական կարողությունները ներդնում է պետականության և ժողովրդի հզորացման գործում: Այս գաղափարը սերմանում է գիտակցված հայրենասիրություն՝ ընդգծելով, որ հայրենիքի հանդեպ սերը ոչ թե լոկ վերացական հուզական զեղում է, այլ կոնկրետ պատասխանատվություն և նվիրում: «Կատարյալ մարդը» հանրության հետ կապված է իր գործունեությամբ, ինչը պատանուն հուշում է, որ ապագա մասնագիտական հաջողությունը պետք է ունենա նաև բարձր սոցիալական ու բարոյական արժեք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Գոշի կողմից առաջադրված «կատարյալ մարդու» տիպաբանությունը հանդիսանում է պատանեկան տարիքի հոգեբանական և արժեքային վերափոխումների արդյունավետ մեթոդաբանական գործիք: Այն հնարավորություն է ընձեռում ավագ դպրոցականին դուրս բերել նեղ անձնակենտրոն շահերի տիրույթից՝ ձևավորելով սոցիալական բարձր պատասխանատվություն և գեղագիտական ներազդեցությամբ հիմնավորված բարոյական ներքին հենք: Գոշի գրական ժառանգությունը ծառայում է որպես հիմնարար առանցք, որի վրա խարսխվում է բարոյապես հասուն անհատի և գիտակից քաղաքացու կերտման գործընթացը: Գոշի կողմից սահմանված բարոյական և իրավական նորմերը, մասնավորապես՝ դատական իշխանության անկողմնակալությունը, տիրակալի (իշխանության) պատասխանատվությունը հանրության առջև և մարդու իրավունքների նախնական տարրերը, իրենց էությամբ համահունչ են ժամանակակից ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության սկզբունքներին: Այս կապը թույլ է տալիս միջնադարյան արժեքները ներկայացնել ոչ թե որպես պատմական մասունք, այլ որպես արդիական քաղաքացիական կողմնորոշիչներ: Մխիթար Գոշի առակներում արտացոլված բարոյաիրավական արժեքները՝ արդարադատությունը, հավասարությունը և չափավորությունը, իրենց գաղափարական բովանդակությամբ լիովին համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակություններին: Դրանք կարող են ծառայել որպես հանձնարարելի ուսուցողական նյութ ավագ դպրոցականների քաղաքացիական դաստիարակության, իրավական գիտակցության բարձրացման և էթիկական կողմնորոշման համար: Մխիթար Գոշի ստեղծագործական ժառանգության համակարգված և նպատակային կիրառումը կրթական գործընթացում հնարավորություն է տալիս հայ գրականության դասաժամերը վերածել անհատի բարոյական կոփման և գաղափարական վերլուծության գործուն հարթակի: Սա նպաստում է այնպիսի վերջնարդյունքների ապահովմանը, որտեղ աշակերտը ոչ միայն ստանում է գրական գիտելիք, այլև յուրացնում է բարոյականության և պետականակենտրոն մտածողության անխախտ սկզբունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբեղյան Մ. (1946). *Հայոց հին գրականության պատմություն* (հտ. 2): ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն:

Անթաբյան Փ. (1980). *Մխիթար Գոշ*: «Հայաստան»:

Արևշատյան Ս. (1975). *Փիլիսոփայական գիտությունը միջնադարյան Հայաստանում*: «Հայաստան»:

Բադալյան Ս. (2002). *Մխիթար Գոշի սոցիալ-իրավական հայացքները*: «Մխիթար Գոշ»:

Գասպարյան Դ. (2009). *Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն*: «Տիգրան Մեծ»:

Գոշ Մ. (1980). *Առակներ*: «Սովետական գրող»:

Գոշ, Մ. (1975). *Գիրք դատաստանի*: «Հայաստան»:

Գևորգյան Ա. (2010). *Հայ մանկավարժության պատմություն*: «Երևանի համալսարանի հրատարակչություն»:

Դարբինյան-Մելքոնյան Հ. (2001). *Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» որպես պատմական աղբյուր*: «Գիտություն»:

Թոսունյան Գ. (1987). *Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» լեզուն*: ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն:

Իշխանյան Ռ. (1993). *Հայ հին գրականության պատմություն*: «Երևանի համալսարանի հրատարակչություն»:

Մկրտչյան Մ. (2005). *Հայ միջնադարյան առակը*: «Գիտություն»:

Մնացականյան Ա. (1981). *Հայկական միջնադարյան քնարերգություն*: «Սովետական գրող»:

Նալբանդյան Վ. (1982). *Միջնադարյան հայ գրականության հիմնական ուղղությունները*: «Լույս»:

Օհանյան Ս. (2012). *Դաստիարակության տեսություն և մեթոդիկա*: «Էդիթ Պրինտ»:

REFERENCE LIST

Abegyan M. (1946). Istoriya drevnearmyanskoj literatury *(History of ancient Armenian literature)* (tom 2). Izdatel'stvo Akademii nauk Armyanskoj SSR.

Antabyan P. (1980). Mhitar Gosh *(Mkhitar Gosh)*. «Armeniya».

Arevshatyan S. (1975). Filosofskaya nauka v srednevekovoj Armenii *(Philosophy in Medieval Armenia)*. «Armeniya».

Badalyan S. (2002). Social'nye i pravovye vzglyady Mhitara Gosha *(Social and legal views of Mkhitar Gosh)*. «Mhitar Gosh».

Gasparyan D. (2009). Istoriya drevnearmyanskoj i srednevekovoj literatury *(History of ancient Armenian and medieval literature)*. «Tigran Velikij».

Gevorgyan A. (2010). Istoriya armyanskoj pedagogiki *(History of Armenian pedagogy)*. Izdatel'stvo Erevanskogo universiteta.

Gosh M. (1980). Poslovicy *(Fables).* «Sovetskij pisatel'».

Gosh M. (1975). Kniga Suda (*The Book of Judgment*). «Armeniya».

Darbinyan-Melkonyan G. (2001). «Kniga zakonov» Mhitara Gosha kak istoricheskij istochnik *(Mkhitar Gosh's "Book of Laws" as a historical source)*. «Nauka».

Tosunyan G. (1987). Yazyk «Knigi zakonov» Mhitara Gosha *(The language of the "Book of Laws" by Mkhitar Gosh)*. Izdatel'stvo Akademii nauk Armyanskoj SSR.

Ishkhanyan R. (1993). Istoriya drevnej armyanskoj literatury *(History of ancient Armenian literature)*. «Izdatel'stvo Erevanskogo universiteta».

Mkrtchyan M. (2005). Armyanskaya srednevekovaya pritcha *(Armenian medieval parable)*. «Nauka».

Mnacakanyan A. (1981). Armyanskaya srednevekovaya liricheskaya poeziya *(Armenian medieval lyric poetry)*. «Sovetskij pisatel'».

Nalbandyan V. (1982). Osnovnye napravleniya srednevekovoj armyanskoj literatury *(The main directions of medieval Armenian literature)*. «Lujs».

Oganyan S. (2012). Teoriya i metodologiya obrazovaniya *(Theory and methodology of education)*. «Redaktirovat' pechatnye izdaniya».

РЕЗЮМЕ

ОБРАЗОВАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ЛИТЕРАТУРНОГО НАСЛЕДИЯ МЕХИТАРА ГОША

Офелия Оганнисян

Изучение этического наследия Мхитара Гоша в образовательной парадигме старшей школы рассматривается как фундаментальное средство противостояния вызовам современности. В условиях моральной дезориентации современного подростка этическая система Гоша, основанная на принципах справедливости, умеренности и рационализма, предлагает оригинальный и важный арсенал для формирования внутреннего иммунитета против общественных пороков. В мировоззрении Гоша нравственность выступает в органическом единстве с правоведением и идеей государственного строительства. В контексте становления правового государства завещанные им принципы «всеобщего блага» и социальной ответственности превращаются в образовательные ориентиры, прививая осознание того, что индивидуальная добродетель является столпом общественно-государственной мощи. Аллегорическая структура притч и решение моральных дилемм служат мощными методическими инструментами для развития аналитических способностей подростков. Они способствуют контекстуальному

восприятию явлений и принятию осознанного морального выбора через выявление причинно-следственных связей. Актуализация средневековой мудрости позволяет учащемуся воспринимать национальную культуру как неотъемлемую часть общечеловеческой цивилизации, стимулируя национальное самопознание и укрепление чувства достоинства. Таким образом, внедрение этической системы Мхитара Гоша в образовательный процесс является не только задачей историко-познавательного характера, но и научно-педагогической стратегией, целью которой является формирование рациональной, морально зрелой личности с активной гражданской позицией.

Ключевые слова: *аллегорическая структура, морально-правовая система ценностей, гражданская ответственность, критическое мышление, ценностная ориентация, государственно-центричное воспитание, национальная идентичность.*

SUMMARY

THE EDUCATIONAL SIGNIFICANCE OF THE LITERARY HERITAGE OF MEKHITAR GOSHA

Ofelya Hovhannisyan

The examination of Mkhitar Gosh's ethical heritage within the educational paradigm of high school is regarded as a fundamental means of confronting the challenges of modernity. In the face of the moral disorientation prevalent among contemporary youth, Gosh's ethical system—anchored in the principles of justice, moderation, and reason—offers a vital and distinctive arsenal for cultivating internal resilience against social vices. In Gosh's worldview, morality exists in organic unity with jurisprudence and the concept of state-building. Within the context of establishing a rule-of-law state, his bequeathed principles of the "common good" and social responsibility are transformed into educational benchmarks, instilling the realization that individual virtue is the cornerstone of socio-political strength. The allegorical structure of his fables and the resolution of moral dilemmas serve as powerful methodological tools for developing the analytical capacities of adolescents. These elements facilitate a contextual understanding of phenomena and foster conscious moral decision-making through the disclosure of cause-and-effect relationships. The revitalization of medieval wisdom allows students to perceive national culture as an inseparable part of universal civilization, thereby promoting national self-awareness and the strengthening of personal dignity. Ultimately, the integration of Mkhitar Gosh's ethical system into the educational process is not merely a matter

of historical inquiry, but a strategic pedagogical approach aimed at shaping a rational, morally mature, and civically engaged modern individual.

Keywords: *allegorical structure, moral-legal value system, civic responsibility, critical thinking, value orientation, state-centered education, national identity.*

Հոդվածը ստացվել է՝ 12.02. 2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 15.02. 2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 21.03.2026